

կեշտութեամբ պահել յաշխարհէ: 37 Եւ կեալ ամենայն հանդարտութեամբ ըստ կամացն Բրիստոսի, մերոյ Արարչին, Որդւոյն Աստուծոյ. եւ արհամարհել կոխել զամենայն անցաւորս, եւ վերամբարձ ի թեւս Սուրբ Զոգւոյն թռչել անցանել ի վերայ ազբախումբ զաւրութեանցս՝ որ աստէն առ մեք պատահիչքն. եւ այնչափ խորշել եւ մերժել եւ յանապիտոյիցս, մինչեւ զկերակուրս աւուրն ռոճկին արհամարհել, թող թէ զմիս կամ զգինի ճաշակել, որ զնախճամեջ պարսն յուղացուցեալ մեղկացուցանէ եւ զճարպն զերկկամամբն պատեալ. ուստի բիր¹ եւ ազգի ազգի ելանեն անթիւ անաւրենութիւնքն: 38 Որ տայ այնպիսեացն, որ զայն սիրեն, ապագնալն ըստ կամս անձանց իւրեանց:

39 Այլ մեզ ընդ այսր լիցի վայելել² ի շնորհս մարդասիրութեանն բարերարութեանն, յոր ամենայն ազգ եւ ազինք խոստովանին զՏէր Յիսուս Բրիստոս ծնեալ ի Զաւրէ, ծնեալ եւ ոչ արարեալ, իսկակից Զաւր եւ բնակից ծնաւդին իւրում. ծագումն, լոյս փառաց Զաւր, կերպարանակից իւրոյ ծնաւդին: 40 Եւ որոց իցեն աչք մտաց, եւ չեն կուրացեալ ի հաւատոցն ճշմարտութենէն, նոցա նայելիս ցուցանէ, որոց ամենայն կողմանքն հայելիք են: 41 Լի լուսով նորա է ամենայն երկինք եւ երկիր եւ ամենայն աշխարհք, եւ ամենեցուն լսելիս որոշի՝ որ ամենայնիւն լսելիք են. եւ ամենայն ծածկեալք սրտից եւ խորհրդոց մտանեն ի լսելիս նորա, եւ զննէ զամենայն շունչս մարմնոյ: 42 Եւ իւրովք կամաւք երեւեցաւ մարմնով հասակաւ անձամբ կերպարանաւք եւ պատկերաւ. գթութիւնքն իւր արարին. եւ ոյք սիրեն զնա, սերն իւրեանց կերպարանէ զնա ի սիրտս իւրեանց, եւ երկիր պագանեն նմա հոգւովն ճշմարտութեամբ. սրբեալ զսիրտս իւրեանց եւ զմարմինս իւրեանց, առնեն տաճար Սուրբ Զոգւոյն. եւ հաղորդք եւ հաւասարորդք եւ բաժանորդք առնին մեր երանութեանս, զոր ետն Տէր եւ ասէ՝ եթէ *Երանի՜ որ հաւատայցեն ճշմարտութեանն. եթէ Որ ետեսն զիս, ետես զՅայրն իմ^ա*. եւ եթէ *Երանի՜ որ ոչն տեսին զիս, եւ հաւատացեն յիս. զի նոքա զՅայր տեսցեն^բ*: 43 Եւ միտք՝ որ յաստուածտեսութենէն հաւատոցն անմասն եղեալ են, ի կերպարանացն թափուր եւ ունայն իբրեւ ախերակք³:

44 Իսկ որք լուսաւորեալք են տեսանելեաց աներեւոյթ սրտին աչաւք, որպէս ասէ մարգարէն. *Ի քեզ ասաց սիրտ իմ, եւ խնդրեցին երեսք իմ զերեսս քո^գ*. դարձեալ ասէ. *Եղի զՏէր առաջի իմ յամենայն ժամ, զի էր ընդ աջմէ իմմէ, զի մի՛ սասանե-*

1 Յօր. բոյր

2 Յօր. վայել

ա Յովհ. ԺԴ 9

բ Զմմտ. Յովհ. Ի 29:

3 *Յօրինակի միում*՝ աւերակ

գ Սաղմ. ԻԶ ԻԷ 8